

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 81'242:82(985)

Մ.Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒՆ**

Դիտարկվում են ազգային լեզվի՝ որպես բացարձակ արժեքի խնդիրը հասարակական կյանքում և նրա անփոխարինելի նշանակությունը գեղարվեստական գրականության համար:

19-րդ դարից քաղաքացիություն ստացած արևելահայ գրական լեզուն ներքին խմորումներով և արտաքին ազդեցություններով հանդերձ զբաղեցնում էր արևելահայ գրողների միտքը, ինչը մեծապես կապված էր քաղաքական նախապատվություններին:

Առանցքային բաներ. ազգային լեզու, գրականություն, հեռանկար:

Ներածություն: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո երկրից հեռացան գրականության այնպիսի ականավոր դեմքեր, ինչպիսիք էին Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Լեո Կամսարը: Մնացողները պարտավոր էին համակերպվել խորհրդային հասարակարգի՝ արվեստի, այդ թվում՝ գրականության մասին պատկերացումներին կամ դուրս մնալ գրական կյանքից, ինչպես Հայրենիք վերադարձած Լեո Կամսարը: «Գրականության կուսակցականությունը» [1] վիճարկման ենթակա չէր: Իսկ կուսակցությունը միակն էր՝ կոմունիստականը՝ իր ամբողջատիրական աշխարհայեցությամբ: Մշակութային և պատմական զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող 100-ից ավելի ժողովուրդների գրականություններին պարտադրվեցին նույն խնդիրները՝ շահագործող դասակարգերի մերժում, սոցիալիստական աշխատանքի փառաբանում, կոմունիզմի հաղթանակի հանդեպ անվերապահ հավատ, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ներարկում, ազգայինի ստորադասում և այլպանում, խորհրդային միասնական ազգի գաղափարի քարոզում:

Խորհրդայնացման պատճառով պետականությունը կորցրած և կենսատարածքներից զրկված Խորհրդային Հայաստանի մտավորականների, հատկապես՝ գրողների առջև, բնականաբար, ծառանում էին նաև «գոյության, հեռանկարի ճակատագրական խնդիրները» [2]:

Ազգային լեզուն որպես բացարձակ արժեք: Խորհրդահայ գրողները կանգնած էին լուրջ խնդրի առջև: Մի կողմից՝ պետք էր ապահովել ամբողջատիրության պահանջը, այսինքն՝ տալ «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» արտադրանք: Մյուս կողմից՝ սեփական տաղանդի շնորհիվ անհրաժեշտ էր

գտնել ճեղքեր, որոնցով, ամբողջատիրության պահանջից զատ, հնարավոր կլինեն կատարել ազգային գրողի բուն առաքելությունը՝ պատասխաններ տալ վերոհիշյալ «գոյության, հեռանկարի ճակատագրական խնդիրներին»։ դա չափազանց բարդ էր, նույնիսկ գեղարվեստական «մեթոդը մշակվում էր պրոլետարական արվեստի առանձնահատկությունների համադրմամբ» [3]: Երրորդ կողմից, որ թերևս ամենից առաջնայինն էր, խորհրդահայ ընթերցողի մեջ անաղարտությամբ պետք էր սերմանել այն արժեքները (ազատություն, անկախություն, հավասարություն, եղբայրություն, արժանապատվություն և այլն), որոնք համամարդկային են, ուստի և՛ ազգային, սակայն պարտադրված էին անցնել խորհրդային պրիզմայի միջով ու մուտացվել: Ահա այս՝ միմյանց հակասող հիմնախնդիրներն էին, որոնք պետք է ձևի գային ազգային լեզվի միջոցով, իսկ Մոսկվան զանազան մանիպուլյացիաներ էր կիրառում՝ ռուսալեզու միասնական ժողովուրդ ստեղծելու նպատակով: Դրա համար առաջ մղվեց Մառի և այլոց՝ խառնուրդ լեզուների հակագիտական տեսությունը [4], շատ ժողովուրդների պարտադրվեց ռուսական կիրիլիցան. հայերենի պարագայում, որպես առաջին քայլ, 1922-ին ստեղծվեց ուղղագրական խառնաշփոթ, ռուսական դպրոցներ պարտադրվեցին անգամ գյուղական շրջաններում և այլն: Դա միայն խորհրդային կարգերի հետևանքը չէր. ցարական Ռուսաստանում հայկական դպրոցներն արգելվել էին երեք անգամ՝ 1885թ., 1897թ., 1903թ.: Այս մասին ամենից ճշգրիտ բնորոշումը տալիս է Ստեփան Զորյանը. «Ռուսաց թագավորը փակել է հայկական դպրոցները, որ ռուս դառնանք» [5]: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ հետագայում ընդվզեցին Թումանյանից և Իսահակյանից մինչև Ռ. Իշխանյան և Բ. Ուլուբաբյան: Այնուամենայնիվ, խորհրդային իշխանության վերջին տարիներին խորհրդային Հայաստանում արդեն բուծվել էին ռուսագիր հայազգի գրողներ:

Այդ գոյության և հեռանկարի ողնաշարը, ինչպես կասեր խորհրդահայ գրականության ամենաերևելի դեմքը՝ Չարենցը, «Բառն» է: Պատահական չէ, որ խորհրդահայ գրականությանը «բնորոշ քաղաքացիական ակտիվության ու կրքոտության» [6] ճիրաններից դուրս պրծած Չարենցն ազգային աղոթքի նշանակություն ունեցող «Ես իմ անուշ Հայաստանի»-ում առաջին արժեք է հռչակում «Արևահամ բառը»՝ խոսքը, լեզուն, Բանը, որ ի սկզբանե էր և Աստված [7]: Եվ դա Տերյանին մերժած Չարենցն էր, որ վերադառնում էր ռուսական հեղափոխական դեգերող գրականության պաթոսից, քիչ անց՝ «ավարտում իր կովի ու հաշտության պատմությունը Վահան Տերյանի հետ» [8]: Կարսի ռուսական ռեալական դպրոցում կրթվածը հենց միայն այդ բանաստեղծության մեջ երկու նոր հայերեն բառ է հյուսում՝ «արևահամ» և «հեզաճկուն»:

Չարենցի՝ «ուրիշ հեքիաթներից» հրաժարումը պարապ հողի վրա չէր կայացել: Նոր և նորագույն գրականությունների հանգույցում կանգնած Տերյանի «Հոգևոր Հայաստանում» դարձյալ բարձրագույն արժեք էր հռչակված ազգային լեզուն՝ «ինքնության գլխավոր նշանը» [9]: Չարենցի ետդարձը դեպի իրական «փառքի ճամփան»՝ դեպի ազգային ոչ անցողիկ արժեքների դավանումը, իրենով պայմանավորեց խորհրդահայ քնարերգության մեջ սոցիալիստական ռեալիզմի երկաթե կաղապարներից ճեղքեր որոնող բանաստեղծների հետագա մի ամբողջ շղթա՝ Մահարի, Շիրազ, Սևակ, Սահյան, Վ. Դավթյան, Հր. Հովհաննիսյան, Ս. Կապուտիկյան, Գ. Էմին, Ռ. Դավոյան: Այս ցանկից ամեն մեկը յուրովի անցկացրել է հայերենն իր աշխատանոցով, կարևորել այն, առանձին բանաստեղծություններ ծոնել ազգային լեզվին, քարոզել մայրենին, իսկ Համո Սահյանի՝ մայրենին «աղն է մեր ինքնության», «Մեր լեզուն մենք ենք, որ կանք» ձևակերպումները պարզապես բանձներ են, որ առաջավոր ցանկացած ազգի մտավորականի համար քննության ենթակա չեն, ինչպես Տերյանն է նշում վերոհիշյալ հոդվածում:

Խորհրդահայ արձակում նույն տրամաբանության մեջ են եղել Բակունցը, Ջորյանը, Խանզադյանը, Գալշոյանը, Մաթևոսյանը և այլք:

Խորհրդանշանների և ծածկագրումների վարպետ Ակսել Բակունցը պարզապես ծոն է հղում հայերենի բարբառներից մեկին՝ Գորիսի բարբառին. «Ինչ չքնաղ լեզու էր կյորեսերենը... Չուտեիր և չխմեիր, այլ միայն այդ լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպես քաղցր և նուրբ հնչյուններով խոսում էր լվացարարուհի Մինան, ինչպես էր ծոր տալիս, ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում և բառերը նստում էին, ինչպես փափուկ մալանչներ: Հապա Դոլուն Կարին... Կռանում էր սառն աղբյուրի վրա, կուշտ խմում և ջուրը բեղերից կաթկթելով ասում էր՝ խուվա՛յ... և այնպես էր ասում, այդ բառն այնպես էր զրնգում, որ եթե աղբյուրը նորահարս լիներ, ամոթից քողը կքաշեր երեսին... Իսկ Աթա ապերը, երբ բարկանար, այնպես մի «ըմբո» կասեր, որ Մեղրաքերծը կդրնգար» [10]:

Պատահական չէ, որ տասնյակ հայ գրողների՝ 1930-ականների դատավարության ժամանակ նացիոնալիզմի մեջ մեղադրելիս խորհրդային պատժիչ մեքենան հղում էր անում նրանց՝ ազգային լեզվի առաջնային կարևորություն տալուն:

Եզրակացություն: Արևելահայ նորագույն գրականության մեջ ազգային լեզվի առանցքային նշանակության քննությունն ու հիմնավորումները 1914թ. տալիս է Վ. Տերյանն իր «Հայ գրականության գալիք օրը» և «Հոգևոր Հայաստան» զեկուցումներում: Չարենցի, Բակունցի, Մահարու, Ջորյանի՝ ազգային

լեզվի հասարակական և գեղարվեստական դերի անփոխարինելիության, բացարձակ և բարձրագույն արժեք լինելու գիտակցումն անփոփոխ մնաց հետագայի խորհրդահայ նշանավոր գրողների համար, որոնք երբեմն թաքուն, երբեմն բացահայտ ստիպված էին կռիվ տալ մի կողմից՝ խորհրդային լեզվական քաղաքականության, մյուս կողմից՝ գրականության համար ազգային լեզվի բացարձակության արժեքն անգիտացող խորհրդահայ մտավորականների դեմ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ջրբաշյան Էդ.**, Գրականության տեսություն, Եր., ԵՊՀ, 1980, էջ 69-75: 496 էջ:
2. **Աղաբաբյան Ս.**, Հայ սովետական գրականության պատմություն, հտ. 1, Եր., ԳԱ, 1988, էջ 7: 576 էջ:
3. **Գասպարյան Դ.**, Փակ դռների գաղտնիքը, Եր., Ապոլոն, 1994, էջ 276: 727 էջ:
4. **Սանտաձե Հ.**, Ի.Վ.Ստալինի լեզվաբանական աշխատությունները և հայերենագիտության հարցերը, Տեղեկագիր Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի, 1952, թիվ 6, էջ 3-15:
5. **Ջորյան Ս.**, Մի կյանքի պատմություն, Եր., Արևիկ, 1988, էջ 59: 432 էջ:
6. **Արզումանյան Ս.**, Սովետահայ վեպը, հտ. 1, Եր., Հայաստան, 1967, էջ 29: 584 էջ:
7. Աստուածաշունչ, Անտարան ըստ Յովհաննէսի, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2004, էջ 119: 1697 էջ:
8. **Թամրազյան Հ.**, Սովետահայ գրականության պատմություն, Եր., ԵՊՀ, 1980, էջ 290: 688 էջ:
9. **Տերյան Վ.**, Երկեր, Եր., Սովետական գրող, 1989, էջ 346: 608 էջ:
10. **Բակունց Ա.**, Երկեր, Եր., Սովետական գրող, 1986, էջ 422: 672 էջ:

М.Г. АЙРАПЕТЯН

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СОВЕТСКОЙ ЛИТЕРАТУРЫ И НАЦИОНАЛЬНЫЙ ЯЗЫК

Рассматривается проблема исключительной значимости национального языка в общественной жизни и его незаменимое значение для художественной литературы.

С XIX в. восточноармянский литературный язык, получивший широкое признание, под влиянием внутренних перипетий и внешних влияний овладел мыслью восточноармянских писателей, что в большинстве случаев было связано с политическими предпочтениями.

Ключевые слова: национальный язык, литература, перспектива.

M.H. HAYRAPETYAN

THE PROBLEMS OF SOVIET ARMENIAN LITERATURE AND THE NATIONAL LANGUAGE

The problem of the national language as an exclusive value in the public life and its irreplaceable importance for fiction are considered.

Since the 19th century, the Eastern Armenian literary language, having acquired universal recognition under the influence of discontent and external impacts, occupied the thoughts of Eastern Armenian writers. This was greatly associated with political preferences.

Keywords: national language, literature, prospect.

ՀՏԴ 81'367.622:811.19

Վ.Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԳՆԱԿԻԱԿԱԳՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Քննվել են արդի գրական արևելահայերենում գոյականի հոգնակիակազմության այն դրսևորումները, որոնք շեղվում են ընդհանուր օրինաչափությունից: Առկա զուգաձևությունների դեպքում առաջարկվել են ընդունելի ձևերը: Նկատի է առնվել նաև, որ որոշ դրսևորումներ ուղենշում են բնականոն փոփոխությունների ընթացքը:

Առանցքային բաներ. գոյականի հոգնակիակազմություն, հոգնակիակազմիչ, վերջավորություն, բառարմատ, զուգաձևություն, լեզվական օրինաչափություն:

Ներածություն: Արդի գրական արևելահայերենում թեև գործում են գոյականի հոգնակիակազմության որոշ կանոններ, բայց շատ բառերի դեպքում հոգնակիակազմիչները դեռևս հստակ և կանոնակարգված չեն: Համապատասխան բառարաններում և աշխատություններում մի շարք գոյականների համար տրված են բոլորովին տարբեր հոգնակիակազմիչներ: Որոշ զուգահեռ ձևեր արտացոլում են բնականոն փոփոխությունների ընթացքը: Բացի դրանից, առկա են բառեր, որոնցում միավանկ վերջնաբաղադրիչը կարող է միաժամանակ ընկալվել թե՛ գոյականական և թե՛ բայական արժեքով, կամ գոյական լինելու դեպքում դրա իմաստը հնարավոր է մասամբ գիտակցել, որի հետևանքով հոգնակին դրսևորվում է տարբեր ձևերով: Կան դեպքեր էլ, որ գոյականները ավանդաբար են գործածվում այս կամ այն հոգնակերտով՝ որևէ կանոնի չենթարկվելով: Հոգնակիակազմության դժվարություններ առկա են թե՛ միավանկ և թե՛ բազմավանկ բառերի դեպքում: Տարբեր լեզվաբաններ հայերենի ձևաբանությանն անդրադառ-